# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 42

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թ-ի դեկտեմբերի 19-ի նիստի օրակարգը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 43

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և "Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ
19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 44

### ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին: ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ ՀՕ 7-րդ հոդվածի 15-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2011 թ-ի "Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 17.01.2001 թ-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով Արմինե Արմենի Խառատյանի հայտը, ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արմինե Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող 06-026-0101-0041 ծածկագրով 0.17321հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության արոտավայրը անասնագոմ կառուցման և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 45

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարությանն 12.04.2001 թ-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող՝

Լոտ1. Լերմոնտովո բնակավայրի 0,18681հա գյուղ.նշանակության 2-րդ կարգի խոտհարքը /ծածկագիր 06-043-0232-0016/ աճուրդ վաճառքով օտարելուն: Մեկնարկային գինը՝ 373 620 /երեք հարյուր յոթանասուն երեք հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ:

Լոտ2. Անտառաշեն բնակավայրի 0,51212հա գյուղ.նշանակության 2-րդ կարգի խոտհարքը /ծածկագիր 06-026-0016-0038/ աճուրդ վաճառքով օտարելուն: Մեկնարկային գինը՝ 1 024 240 /մեկ միլիոն քսանչորս հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ:

Լոտ3. Անտառաշեն բնակավայրի 0,31122հա գյուղ.նշանակության 2-րդ կարգի խոտհարք /ծածկագիր 06-026-0101-0046/ աճուրդ վաճառքով օտարելուն: Մեկնարկային գինը՝ 624 400 / վեց հարյուր քսանչորս հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:

Մասնակցության վճարը՝ 2000 ՀՀ դրամ: Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 50%-ի չափով:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել աճուրդում օտարվող անշարժ գույքի հայտարարության հրապարակային ծանուցումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**